

Ա. Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, 1238 էջ:

## *Տպագրվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի միջոցներով*

Իր «Հայոց լեզվի հոմանիշների բառարանի» (1967, ՀՍՍՀ ԳԱ հրատ.) հրատարակումից երեսուցուց տարի հետո բազմավաստակ գիտնականն ու բառարանագիրը ընթերցողի սեղանին դրեց հոմանիշների՝ իր բնույթով նախորդից բազմաթիվ շահեկան հատկանիշներով տարբերվող նոր, այս դեպքում նաև բացատրական, բառարան: Եթե 1967 թ. բառարանը շուրջ 83 հազ. բառերի ու դարձվածքային միավորների հոմանշային շարքերի գիտական ու բառարանագրական մշակման արդյունք էր, ապա նոր բառարանը ընդգրկում է 130 հազ. բառ ու դարձվածք՝ հոմանիշների մի ծով հարստություն:

Հոմանիշ բառերի ու դարձվածքների՝ շրջանառության մեջ նոր դրված հսկայածավալ զանգվածի (շուրջ 47 հազ. միավոր) գերակշիռ մասը անխոնջ գիտնականը հավաքել է մեր լեզվի երկու տարբերակներից՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներով վերջին երեսնամյակի տարաբնույթ գրականությունից, մամուլից, բառարաններից ևն: Այն, անշուշտ, ընդհանուր հայերենի բառապաշարի համալրման, հարստացման ու բազմակողմանիացման, մեր բառակազմության անսահման հնարավորությունների փաստական նոր վկայությունն է: Հատկապես ուզում են շեշտել արևմտահայ գրականում գործածական հոմանիշների լայն ընդգրկումը նոր բառարանում, որով արևելահայ ընթերցողին ևս մատչելի են դառնում հազարավոր հայակերտ նորակազմություններ, դրանով իսկ նպաստելով գրական լեզվի երկու տարբերակների բառապաշարի համահայկականացման ու միասնականացման ազգօգուտ գործին:

Պրոֆ. Ա. Սուքիասյանը նոր բառարանում ևս առաջնորդվում է վաղուց ի վեր իր դավանած այն սկզբունքով, որ հոմանիշ պետք է համարվեն այն բառերը և դարձվածքները, որոնք նույնն են կա՛մ մոտ են ի-

րենց իմաստներով, բայց կարող են տարբերվել իրարից կա՛մ իմաստային նրբերանգներով, կա՛մ ոճագործառական առանձնահատկություններով, կա՛մ էլ այդ երկու յուրահատկություններով միաժամանակ: Գիտական այս մոտեցումով մշակված 130 հազ. բառահողվածներում հոմանիշները բնութագրված ու դասդասված են ըստ հայերենի զարգացման պատմական փուլերի ու տարածքային տարբերակների, դրանցից յուրաքանչյուրում՝ ըստ գործունության ու ոչ գործունության, ըստ հատկանշային բառերի արտահայտած հատկանիշների աստիճանականության և՛ յուրաքանչյուր դեպքում աչքի առաջ ունենալով հայերենի՝ արդի փուլի գրական չափանիշը: Այս սկզբունքը հետևողականորեն պահպանված է ամբողջ բառարանում, որով և բառարանի բառահողվածները ստացել են հետևյալ կառուցվածքը. նախ՝ դրված են գրական հայերենի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի հոմանիշ բառերը, ապա՝ տարածքային, ժամանակագրական, ոճագործառական ևն շրջանակներով սահմանափակվածները՝ յուրաքանչյուր դեպքում համապատասխան (բարբառային, գավառական, ժողովրդախոսակցական, հին, հնացած, գրքային, բանաստեղծական ևն) բնութագրումով: Բառ-գլխաբառին հոմանիշ դարձվածքները գետեղված են բառահողվածի վերջում: Ներկայացվող բառարանում շեղված գլխաբառերով, հատկապես տերմինային և տեխնիկական բառահողվածների մեջ հոմանիշ միավորների նվազագույն քանակը երկուսն է [օր. երկդաշտային, ա. (գյուղտնտ.) Երկդաշտ (երկդաշտության եղանակով մշակվող, Գագաղտիչ, գ. (տեխ.) Գագամաքրիչ (գագամաքրման սարք)], իսկ բազմիմաստ բառերում հոմանիշների թիվը հաճախ հասնում է հարյուրների: Բառարանագրի հստություն-

ընդ որսերով անց տեսնում հատկապես բազմիմաստ բառերի հոմանշային շարքերը մատուցելիս ու նկարագրելիս: Գիտագործնական տեսակետից բազմիմաստ բառերի տարբեր իմաստների հոմանշային շարքերի այն բազմազանությունն ու հարստությունը, որը ներկայացված է բառարանում, ինչպես և բառարանը ամբողջապես, մեծ արժեք է ներկայացնում և, չենք կասկածում, կդառնա գիտական մի շարք ուսումնասիրությունների անսպառ շտեմարան: Բառարանը լավագույն վկայությունն է այն բանի, որ արդի հայերենի բազմիմաստ բառերը հոմանշային ճոխ շարքեր են կազմում իրենց իմաստների գերակշիռ մասերի համար: Այդ տեսակետից թերևս անհետաքրքիր չի լինի նշել, որ է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում ոտք գլխաբառի քսան իմաստներից ներկայացվող բառարանում հոմանշային շարքեր ունեն 16-ը, բոնել գլխաբառի 33-ից՝ 23-ը, իսկ տալ գլխաբառի 58 իմաստներից՝ 46-ը:

Ա. Սուքիասյանի նոր բառարանի բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ հոմանշային շարքերում նորաստեղծ գիտատեսիլական բառապաշարի լայն ընդգրկումն է: Նորակազմ հայկերտ բառերի արժեքավոր բառաքանակ է քաղված հատկապես Ռ. Ղազարյանի բուսաբանների ու կենդանիների անունների կարգաբանական բառարաններից, որը, անշուշտ, կնպաստի դրանց տարածմանն ու փոխառյալները դուրս վանելուն: Հոմանշային այս նոր բառարանում հատուկ խնամքով ըստ հոմանշային շարքերի ներկայացված է

նաև հայերենի հարուստ դարձվածքաբանությունը:

Պրոֆ. Ա. Սուքիասյանի նոր բառարանի արժեքավոր նորություններից մեկն էլ նրա բացատրական լինելն է, որով խիստ բարձրանում է դրա գործնական արժեքը: Բացատրությունները (հազվադեպ՝ հոմանիշ բառերը և բառաձևերը) հաջորդում են ինչպես չհղվող միաշարք հոմանշային միավորներին, այնպես էլ բազմիմաստ բառերի յուրաքանչյուր իմաստին, ինչպես՝ Աշխատածամանակ, գ. Աշխատածամ (աշխատանքի ժամանակամիջոցը), Աշխատակազմ, գ. Ապարատ (հիմնարկի աշխատակիցների կազմը): Բացատրությունները շատ դեպքերում վերածվում են նաև տվյալ իմաստով հոմանիշի կապակցելիության փաստական ցուցադրման, ինչպես՝ Տալ, Գր... 5. Վանել, մոծել (վարձը էլ): 6. Թողնել, հանձնել (մեկի ձեռքը օգտել): ... 11. Օծտել (մի բանով): ... 31. Նշանակել, կարգել (մի գործի, պաշտոնի) ևն:

Այս հանգամանքը բառարանը առավել մատչելի է դարձնում՝ նպաստելով նրբիմաստների տարբերակմանը, ըմբռնմանն ու յուրացմանը:

Վերջում պարտքս եմ համարում որպես և՛ ընթերցող, և՛ բառարանագիր-մասնագետ միանալու հեղինակի ու համալսարանի հրատարակչության շնորհակալությանը Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությանը և նրա Հայկական բաժանմունքի տնօրեն դր. Զավեն Եկավյանին՝ նման բարձրարժեք բառարանի հրատարակությունը հովանավորելու համար:

Ս. Ա. ԳԱԼՍՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՈՆՅ, Պատկերների խնդիրը, աշխատասիրությամբ Պ. Գ. Գովհաննիսյանի, Երևան, 2003, 90 էջ:

*Հրատարակվել է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան, դոկտ., պրոֆ. Շահեն արք. Աճեմյանի «արդեսաբ եւ ծախիւք»:*

2003 թ. հայագիտությունը հարստացավ մի նոր ու շատ կարևոր ձեռքբերումով: Աստվածաբանության ֆակուլտետի «Աճեմյան մատենաշարով» լույս տեսավ ակադեմիկոս պատմաբան Նիկողայոս Ադոնցի պատմա-աստվածաբանական «Պատկերների խնդիրը» անտիպ աշխատությունը, ո-

րը մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև բյուզանդագիտության և հայագիտության տեսանկյունից:

Ինչպես գրքի ներածականում ցույց է տալիս Ն. Ադոնցի արխիվի հայտնաբերող դոց. Պ. Հ. Հովհաննիսյանը, լինելով XX դարի համաշխարհային բյուզանդագիտու-